

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ**

Արձանագրություն թիվ 2

12.11.2021թ.

1. Համալսարանի ստորաբաժանումներում 2021-2022 ուս. տարվա առաջին կիսամյակի ուսման վարձավճարների զեղչերի սահմանման հարցի վերաբերյալ.

1.1. Հաստատել ռեկտորատի նիստի ընթացքում ներկայացված 2021-2022 ուս. տարվա առաջին կիսամյակի ուսման վարձավճարների զեղչերը (հրամանները կցվում են):

1.2. Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի մասնագետ, Ը.00.02 մասնագիտության հայցորդ Գոհար Ասատրյանի ուսման վարձը զեղչել 50%-ի չափով:

1.3. Հեռակա ուսուցման դեպրտամենտի կենսագործունեության անվտանգություն մասնագիտության 5-րդ կուրսի ուսանող Տիգրան Միքայելյանի 2020-2021 ուս. տարվա ուսման վարձավճարը զեղչել 50%-ի չափով:

1.4. ՀՈՒԴ հետևյալ ուսանողների համար սահմանել 2020-2021 ուս տարվա ուսման վարձավճարի զեղչ 20%-ի չափով.

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Մասնագիտություն, կուրս	Տարեկան ուսման վարձը (հազ. դր.)
1	Խաչատրյան Հայկ Հովհիկի	Ագրոէկոնոմիկա և սննդի էկոնոմիկա 2-րդ կուրս	490.0
2	Մելիքյան Արեն Վաչիկի	Սննդամթերքի անվտանգություն 2-րդ կուրս	380.0
3	Սարգսյան Տիգրան Բաբկենի	Խմորման արտ. տեխնոլ. և գինեգործություն 2-րդ կուրս	380.0

2. Համալսարանի ստորաբաժանումներում 2021-2022 ուս. տարվա առաջին կիսամյակի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում ուսանողների հաճախումների վերաբերյալ.

22.1. Ընդունելի գիտություն:

2.2. Հանձնարարել դեկաններին և ՌԻԳԿՎ պետ Ա. Աղասարյանին՝ սեղմ ժամկետում ներկայացնել հաշվետվություն՝ նշելով 2020-2021 ուս տարվա մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերով հաջորդ կուրս փոխադրված, կրեդիտային պարտքերի լրացման դիմումներ ներկայացրած, վճարումներ կատարած և պարապմունքներին մասնակցող ուսանողների թիվը, նաև լրացումների ընթացիկ վիճակը:

2.3. ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղի քոլեջի «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության 2021-2022 ուստարվա 2-րդ կուրսի անվճար ուսուցման համակարգի ուսանող Արեն Սերյոժայի Համբարյանին հեռացնել համալսարանից՝ անհարգելի մեծաթիվ բացակայությունների պատճառով (328 ժամ):

3. Հեռակա ուսուցման դեպարտամենտում 2021-2022թթ ուս. տարվա ընդունելության արդյունքների և առաջին կուրսերի պարապմունքների կազմակերպման խնդիրների վերաբերյալ.

3.1. Ընդունելի գիտություն:

3.2. Հանձնարարել գլխավոր հաշվապահ Մ. Պողոսյանին՝ սեղմ ժամկետում ռեկտոր Վ. Ռոճուսյանին ներկայացնել տվյալներ հատուկ պայմանագրերով (օրինակ՝ «Պատիվ ունեմ») սովորող ուսանողների վերաբերյալ:

3.3. Հանձնարարել գլխավոր հաշվապահ Մ. Պողոսյանին և իրավաբանական բաժնի պետ Մ. Վարդանյանին՝ սեղմ ժամկետում վերանայել ուսանողների հետ կնքվող պայմանագրի ձևաչափը և սահմանել ուսման վարձավճարի գանձման հստակ ժամկետներ (տարեկան, կիսամյակային կամ ամսեկան ձևաչափերով):

4. 2021թ նոյեմբերի 15-ից համալսարանում առկա ձևաչափով ուսումնական պարապմունքների կազմակերպման վերաբերյալ.

4.1. Ընդունելի գիտություն:

4.2. Հանձնարարել դեկաններին՝ մինչև նոյեմբերի 17-ը ՈԳԱ կենտրոն ներկայացնել դասալսումների ցուցակներ, դասալսումների հանձնաժողովների կազմում ընդգրկել նաև ՈԳԱ կենտրոնի աշխատակից:

5. ՀԱԱՀ միջին մասնագիտական կրթության և բակալավրի առարկայական ծրագրերի համեմատական վերլուծության և քոլեջի ուսումնական պլանների վերանայման հարցի վերաբերյալ.

5.1. ՀԱԱՀ քոլեջի շրջանավարտը բակալավրիատում կրթությունը շարունակելու դեպքում պետք է ուսումնասիրի ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներն ու մոդուլները և չի կարող ազատվել քոլեջում ուսումնառության ընթացքում անցած առարկաներից/մոդուլներից, քանի որ դրանց ուսումնառության նպատակներն ու վերջնաարդյունքները տարբերվում են:

5.2. Հանձնարարել միջազգային կապերի և կրթական բարեփոխումների աշխատանքների գծով պրոռեկտոր Մ. Մովսիսյանին՝ սեղմ ժամկետներում ձևավորել հանձնախմբեր, որոնք կվերանայեն քոլեջների ուս. պլանները: Հատուկ ուշադրություն դարձնել քոլեջի չորս մասնագիտությունների գծով դուալ ծրագրերին:

6. Նախորդ տարիների ընթացքում համալսարանից հեռացված ուսանողների՝ ուսանողական իրավունքների վերականգնումից հետո նախորդ տարիների ուսման վարձավճարների պարտքերի մարման և գումարի գանձման խնդիրների վերաբերյալ.

6.1. Ընդունելի գիտություն:

6.2. Հանձնարարել իրավաբանական բաժնի պետ Մ. Վարդանյանին՝ սեղմ ժամկետում կատարել համապատասխան փոփոխություններ ուսանողական իրավունքները վերականգնող ուսանողների հետ կնքվող պայմանագրերում և կարևորել ֆինանսական կարգապահությունը:

6.3. Հանձնարարել ՀՈՒԴ պետ Հ. Հարությունյանին՝ 2020-2021 ուս տարվա ամփոփումը կատարել մինչև ս.թ. դեկտեմբերի 30-ը:

7. ՀՀ ԷՆ ԲԲՏՄ ԳԿ տնօրենի կողմից ներկայացված գրության վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց ՀՀ ԷՆ ԲԲՏՄ ԳԿ հայցորդ Աննա Հակոբի Հակոբյանի ուսումնական պլանով նախատեսված դասընթացների և քննությունների մեկ կրեդիտին համարժեք վճարվող գումարը զեղչել 50%-ով (հրամանը կցվում է):

8. Ագրոնոմիական ֆակուլտետի մագիստրոսական և բակալավրիական կրթական ծրագրերի որոշ կուրսերի փակման պատճառով կրթական այլ ծրագրեր տեղափոխված ուսանողների համար ուսման վարձավճարի զեղչ սահմանելու հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց ագրոնոմիական ֆակուլտետի «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության «Կայուն գյուղատնտեսություն» կրթական ծրագրի 1-ին կուրսի մագիստրանտ Աշոտ Մարատի Անդրիասյանի և «Ագրոնոմիա» մասնագիտության «Բույսերի պաշտպանություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող Հայկ Արտակի Աղաբեկյանի ուսման վարձավճարներն ամբողջությամբ փոխհատուցել համալսարանի միջոցների հաշվին:

9. Ա. Քոչինյանի անվան գ/տ քոլեջի կրթական որոշ ծագրերի համար ամփոփիչ ատեստավորման հստակ ձևաչափ սահմանելու անհրաժեշտության հարցի վերաբերյալ:

Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի ամփոփիչ ատեստավորման գրաֆիկները կազմելիս՝ հրամանում սահմանել ատեստավորման ձևաչափը:

10. Վանաձորի մասնաճյուղի հեռակա ուսուցման «Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում» մասնագիտության 2020-2021 ուս տարվա 5-րդ կուրսի ուսանող Նիկոլայ Հովհաննեսի Հովհաննիսյանի ուսման վարձավճարի զեղչման հարցի վերաբերյալ.

Ընթացք տալ ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղի հեռակա ուսուցման «Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում» մասնագիտության 2020-2021 ուս տարվա 5-րդ կուրսի ուսանող, 2-րդ խմբի հաշմանդամ Նիկոլայ Հովհաննեսի Հովհաննիսյանի ուսման վարձավճարի զեղչման գործընթացին, պարզել թերացողներին և հայտարարել նկատողություն:

11. Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի 2018-2019թ «Պարենամթերքի փորձաքննություն» մասնագիտության առաջին կուրսի վճարովի համակարգի ուսանող Իգիթ Եսայի Գևորգյանին համալսարանից հեռացնելու հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը բաց քվեարկության միաձայն որոշեց Պարենամթերքի փորձաքննություն մասնագիտության առաջին կուրսի վճարովի համակարգի ուսանող Իգիթ Եսայի Գևորգյանին հեռացնել համալսարանից՝ գործող կարգի համաձայն:

12. Առկա ձևաչափով ուսումնական պարապմունքներին վերադառնալու պայմաններում համալսարանում տիրող համաճարակային իրավիճակի և հակահամաճարակային միջոցառումների իրականացման վերաբերյալ.

Ընդունել ի գիտություն:

13. Արտերկրում գտնվող՝ հեռակա ուսուցման դեպարտամենտի որոշ ուսանողների կողմից ներկայացված դիմումների վերաբերյալ.

Հանձնարարել ՀՈՒԴ պետ Հ Հարությունյանին, ՈՒԳԿ վարչության պետ Ա. Աղասարյանին՝ ուսումնասիրել քննություններին հեռավար ձևաչափով մասնակցության դիմում ներկայացրած յուրաքանչյուր ուսանողի փաստաթղթային փաթեթը, դիմումի հիմքերը և կայացնել համապատասխան որոշում:

14. ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղի հեռակա ուսուցման բակալավրիատի «Անասնաբուծություն» մասնագիտության «Անասնաբուծական սանիտարական փորձաքննություն» կրթական ծրագրի 2021-2022 ուստարվա վեցերորդ կուրսի երկու ուսանողների արտադրական պրակտիկայի կազմակերպման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղի հեռակա ուսուցման բակալավրիատի «Անասնաբուծություն» մասնագիտության «Անասնաբուծական սանիտարական փորձաքննություն» կրթական ծրագրի 2021-2022 ուստարվա վեցերորդ կուրսի ուսանողներ Արտյոմ Գազիկի Դանիելյանին և Արմենուի Արմենի Մարգարյանին թույլատրել արտադրական պրակտիկական անցնել ՌԴ Սարատով քաղաքի «Օվել» ՍՊԸ-ում:

15. ՀԱԱՀ գիտական կենտրոնների կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ.

Ընդունել ի գիտություն:

16. 2021թ նոյեմբերի 17-ին, ուսանողության միջազգային օրվա կապակցությամբ եռաբլուր պանթեոն այցելության հարցի վերաբերյալ:

Հանձնարարել ՈՒԳԿ վարչության պետ Ա. Աղասարյանին և ուս. խորհրդի նախագահ Թ. Ալիյանին՝ ս.թ. նոյեմբերի 17-ին կազմակերպել ռեկտորատի անդամների այց եռաբլուր պանթեոն:

Նիստի ավարտին ռեկտոր պարոն Ռիտայանը ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարեց առկա ձևաչափով կազմակերպել 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի միջանկյալ քննությունները:

ՈՒԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝



Վ.Է. ՈՒԿՈՒՏՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Գ.Գ. ԱԿԱԳՅԱՆ